սկզբնական ուսումը և կրօնաւորական կոչումը ստացած Վարդան ճգնաւորի մօտ 6 տարի մնալուց յետոյ՝ մօտաւորապէս մինչև 1375 թ.,—կատարելագործած իւր ուսումը Յ. Որոտնեցու մօտ՝ 8 տարուայ ընթացքում, որ ասել է՝ ոչ ուշ քան 1385 թ. (որովհետև յաջորդ թուին վախճանուեց «մեծ վարժապետը»),—և վարդապետական աստիճան ստանալու համար դեգերած լինելով Սարգիս վարդապետի մօտ՝ 10 տարի, այսինքն ոչ ուշ քան 1400 թուականը (որովհետև այդ միջոցներին վախճանուեց Սարգիս վ.), Եթէ Խլաթեցու Երուսաղէմ գնալն ևս դնենք նորա վարդապետական աստիճանն ստանալուց յետոյ՝ նախ քան վանահայրութիւնը, պէտք է որ այդ ուղևորութիւնը եղած լինի 1400—1405 թուերի մէջ, որովհետև յաջորդ 1406-ին նա ստանձնեց Սուխարայ ուխտի և կարճ միջոցից Ցիպնավանքի առաջնորդութիւնը։

Ժամանակակիցները—Թոմա Մեծոբեցի, Առաքել Սիւնեցի և այլք—մեծ գովութեամբ են խօսում Խլաթեցու մասին. «ոչ գոլով նման նմա ողորմած և մարդասէր և սպասաւոր աղքատաց և տնանկաց». — կոչում են նորան «մեծ բաբունապետ, որ ի վերջին աւուրս քան զառաջինսն զե-